

4.3.2. Ներքին զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների, 2006թ. հունվար-մարտին հանրապետության տարածքում տեղաբաշխված կուլեկտիվ և անհատական զբոսաշրջիկների տեղավորման միջոցներում (կացարաններում) տեղավորվել են 25393 զբոսաշրջիկ (ՀՀ ռեզիդենտներ), որը 2005թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 3.1%-ով:

Ներքին զբոսաշրջությունն ըստ նպատակի

	2005 թ. հունվար-մարտ	2006 թ. հունվար-մարտ	Աճի տեմպը, %	Տեսակարար կշիռը (2006թ. հունվար- մարտ, %)
Ընդամենը զբոսաշրջիկներ¹	24631	25393	103.1	100.0
<i>որոնցից ըստ նպատակի՝</i>				
գործնական	8128	8783	108.1	34.6
հանգստի և ժամանցի	14101	13629	96.6	53.7
բուժման	695	1032	148.5	4.1
այլ	1707	1950	114.2	7.7

¹ Տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցներում, հյուրանոցային հանգրվաններում, առողջարաններում, հանգստյան տներում հաշվառված զբոսաշրջիկներին: